**ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵ**
**ՆԱԽԱԳԱՀ**

# Հ Ր Ա Մ Ա Ն

№ -Ա « » **2023 թ.**

**ք.Երևան**

## ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ՀԱՇՎԱՌՎԱԾ ԳՈՒՅՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՇՎԵԿՇԻՌ ԳՈՒՅՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՅՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՈՒ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 2-Ի N 30-Ա ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի 2009 թվականի օգոստոսի 13-ի N 74-Ն հրամանի 1-ին կետի պահանջները՝

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ**

1. Պետական գույքի կառավարման կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) հաշվեկշռում հաշվառված գույքի հանձնման և Կոմիտեի հաշվեկշիռ գույքի ընդունման նպատակով ստեղծել գույքի հանձնման-ընդունման հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով) և հաստատել հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 2022 թվականի փետրվարի 2-ի «Գույքի հանձնման-ընդունման հանձնաժողով ստեղծելու և դրա անհատական կազմը հաստատելու ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի 2012 թվականի ապրիլի 10-ի N 98-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 30-Ա հրամանը:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Պետական գույքի կառավարման կոմիտեի գլխավոր քարտուղարին:

20.04.2023

X

**ԱՌՆԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ** Signed by: AVETISYAN ARNAK 1701920336

Հավելված
Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի
2023 թվականի «_____________» «____» -ի
N _____ - Ա հրամանի

**ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ**

**ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ՀԱՇՎԱՌՎԱԾ ԳՈՒՅՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՇՎԵԿՇԻՌ ԳՈՒՅՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ**

| | |
|---|---|
| Տաթևիկ Իսրաելյան | Պետական գույքի տնօրինման վարչության պետական գույքի գրանցման և հաշվառման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար, հանձնաժողովի նախագահ |
| Հենրիկ Սահակյան | Հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսական վարչության հաշվապահական հաշվառման, ֆինանսական հաշվետվությունների և վճարումների բաժնի պետ, հանձնաժողովի անդամ |
| Ռոման Արշակյան | Հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսական վարչության տնտեսական բաժնի պետ, հանձնաժողովի անդամ |
| Արկադի Պետրոսյան | Իրավական ապահովման և դատական ներկայացուցչության բաժնի գլխավոր իրավաբան, հանձնաժողովի անդամ |
| Լիլիթ Օսիպյան | Առաջին բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ |
| Արմեն Քոչարյան | Պետական բաժնեմասի կառավարման վարչության պետական մասնակցությամբ ընկերությունների կառավարման և մոնիտորինգի բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ |
| Վարդուհի Սաֆարյան | Պետական բաժնեմասի կառավարման վարչության պետական մասնակցությամբ ընկերությունների կառավարման և մոնիտորինգի բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ |
| Կարեն Գալոյան | Պետական գույքի տնօրինման վարչության պետական գույքի գրանցման և հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ |
| Գայանե Դավթյան | Պետական գույքի տնօրինման վարչության |

| | |
|---|---|
| | պետական գույքի գրանցման և հաշվառման բաժնի ավագ մասնագետ, հանձնաժողովի անդամ |
| Արսեն Աբգարյան | Հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսական վարչության հաշվապահական հաշվառման, ֆինանսական հաշվետվությունների և վճարումների բաժնի մասնագետ, հանձնաժողովի անդամ |